Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 8

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2011թ. հունիսի 2-ին կայացած թիվ 6 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Պետական քննական առարկաների նախագահների հաշվետվությունը:
2. 2010-11 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:
3. Ամբիոնային և դասախոսական ծանրաբեռնվածությունների կազմման ընթացքը ֆակուլտետում:
4. Պետական նոր քննական կարգի հաստատման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1-ին հարցի առիթով ելույթ ունեցան բակալավրիատի արդեն ավարտված պետական քննական հանձնաժողովի նախագահ պրոֆ. Յու. Դավթյանը: Նա հիմնականում իր գոհունակությունը հայտնեցին քննություններից ու արեց արդյունավետ առաջարկություններ (նրա հաշվետվությունը կցվում է):

Այնուհետև 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների վիճակը ներկայացրեց դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը՝ նշելով, որ դրանք ընթանում են բնականոն հունով:

Ֆակուլտետի խորհուրդը հաստատեց նոր ուսումնական տարում պրոֆեսորա-դասախոսական կազմի ժամային ծանրաբեռնվածությունները:

Ընթացիկ հարցերում որոշվեցին՝

ա/ Երաշխավորել բանասիրական գիտությունների թեկնածու, հայ նորագույն գրականության ամբիոնի ասիստենտ Սիրանուշ Գառնիկի Դվոյանին և բանասիրական գիտությունների թեկնածու, հայ գրականության ամբիոնի ասիստենտ Հայկ Աշոտի Համբարձումյանին՝ մասնակցելու դոցենտի կոչման համար նոր ընթացակարգին

բ/ Հաստատել Սերգեյ Աղաջանյանի դոկտորական ատենախոսության /«Գուրգեն Մահարու արձակի պոետիկան»/ թեման Ժ 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ